Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

«Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան,

հիմք ընդունելով փոխադարձության սկզբունքը,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Արաբական Միացյալ Էմիրությունները Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով տրամադրում է 0,7 հեկտար հողատարածք (հող թիվ 53), որը գտնվում է Աբու-Դաբիի 2/59 արևմտյան մասի Դիվանագիտական թաղամասում, դեսպանության շենքի կառուցման համար:

Հոդված 2

Հայաստանի Հանրապետությունը Արաբական Միացյալ Էմիրություններին սեփականության իրավունքով տրամադրում է 0,7 հեկտար հողատարածք Երևանում՝ Ծովակալ Իսակովի պողոտայում, դեսպանության շենքի կառուցման համար:

Հոդված 3

1. Հայկական կողմը կատարում է անհրաժեշտ բոլոր ծախսերը, որոնք պահանջվում են 0,7 հեկտար հողատարածքի (հող թիվ 53) վրա, որը գտնվում է Աբու-Դաբիի 2/59 արևմտյան մասի Դիվանագիտական թաղամասում, իր դեսպանության շենքի կառուցման համար:
2. Արաբական կողմը կատարում է անհրաժեշտ բոլոր ծախսերը, որոնք պահանջվում են Երևանում՝ Ծովակալ Իսակովի պողոտայում գտնվող հողատարածքի վրա իր դեսպանության շենքի կառուցման համար:

Հոդված 4

Յուրաքանչյուր կողմ սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված հողատարածքների վրա շինությունների կառուցման, ընդարձակման և վերակառուցման աշխատանքներն իրականացնում է ներպետական օրենսդրության համաձայն և իրավասու մարմնի թույլտվությամբ:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված հողատարածքներում շինությունների կառուցման, ընդարձակման և վերակառուցման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝

1. Յուրաքանչյուր Կողմ ազատ է հրավիրելու ընկերություններ ընդունող կամ իր երկրից՝ նախագծման, շինարարական աշխատանքների, ստուգման, հսկողության կամ աշխատանքների ընդունման նպատակով:

2. Վերը նշված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները երկրների տարածք են ներմուծվում առանց մաքսային տուրքերի:

3. Ընդունող երկիրը պարտավոր է կարգավորել վերը նշված աշխատանքներին մասնակցող անձնակազմին արտոնագիր տրամադրելու հետ կապված հարցերը:

Հոդված 6

Այն շինությունները, որոնք պետք է կառուցվեն սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված տարածքներում, դառնում են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների սեփականությունը: Կառուցման աշխատանքների ավարտից հետո Կողմերը միմյանց կաջակցեն սեփականության իրավունքի պետական գրանցման հարցում:

Հոդված 7

Վերը նշված տարածքները, ինչպես նաև Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված՝ կառուցման ենթակա շինությունները պետք է օգտագործվեն բացառապես դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունների համար, ինչպես նաև դիվանագիտական անձնակազմի կեցության համար: Այլ նպատակներով դրանց օգտագործումն արգելվում է: Կողմերից ոչ մեկն իրավունք չունի վաճառելու, վարձակալությամբ տալու կամ փոխանցելու սույն Համաձայնագրում նշված հողատարածքները և շինությունները՝ առանց մյուս Կողմի թույլտվության:

Հոդված 8

Կողմերի միջև ծագած՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրարկման հետ կապված բոլոր վեճերը պետք է լուծվեն բարեկամական խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական օրենսդրությամբ պահանջվող համապատասխան ընթացակարգերը կատարելու մասին վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և վավերական է անորոշ ժամկետով:

Սույն Համաձայնագիրը դադարում է գործել դադարեցման մասին Կողմերից մեկի գրավոր ծանուցումը ստանալու օրվանից 6 ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2009 թվականի հունիսի 21-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. նոյեմբերի 23-ին: